Հայ պատմագրություն
5-րդ դարի պատմիչներ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

(410-490)

Ոսկեդարի խոշորագույն մատենագիրն է Մովսես Խորենացին. պատմագիր, մեկնիչ, բանաստեղծ, թարգմանիչ, իմաստասեր, աստվածաբան: Մեծարվել է Մեծն Մովսես փիլիսոփա, Տիեզերահռչակ վարդապետ և այլ պատվանուններով:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծնվել է 410-415 թվականների միջև, հավանաբար՝ Սյունիքի Խորյան գյուղում (մեկ այլ վարկածով՝ Տարոն գավառի Խորնի գյուղում):

Վաղարշապատի դպրոցում աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին, յուրացրել է հունարեն և ասորերեն լեզուները:

Շուրջ 435 թվականին ուսանողական մի խմբի հետ ուղարկվել է Ալեքսանդրիա՝ ուսումը շարունակելու: Դա այն խումբն էր, որի մեջ ընդգրկված էր նաև Եղիշեն: Խորենացին ինքը նկարագրել է այդ ուղևորությունը: Իր ընկերների հետ նա հարավային երկրները շրջագայելով՝ հասնում է Եդեսիա՝ այն քաղաքը, որտեղ Մեսրոպ Մաշտոցն արարել էր հայոց գրերը: Եդեսիայում նա որոշ ժամանակ ուսումնասիրում է տեղի հարուստ գրադարանները, ծանոթանում պաղեստինյան մատենագրությանը:

Այնուհետև ուսման ծարավ հայ երիտասարդների խումբը մեկնում է Եգիպտոս՝ Ալեքսանդրիա: Այստեղ Խորենացին աշակերտում է մի նշանավոր փիլիսոփայի, որին կոչել է նոր Պլատոն: Նա, առանց ավելորդ համեստության, իրեն համարել է իր ուսուցչի արժանավոր աշակերտը՝ հպարտանալով իր ձեռք բերած հիմնավոր ուսմամբ: Խորենացին հմտանում է հատկապես աստվածաբանության, պատմության, քերականության, երաժշտության և քերթողական արվեստ կոչված ճարտասանական ու բանաստեղծական արվեստի մեջ, յուրացնում է հունական գրականության, դիցաբանության և իմաստասիրության հարուստ փորձը:

Ալեքսանդրիայում կատարելագործվելուց հետո Խորենացին իր ընկերների հետ նավարկում է դեպի Հունաստան: Սակայն ծովային սաստիկ քամիները նրանց նավը քշում են դեպի Իտալիայի ափերը: Օգտվելով առիթից՝ հայ երիտասարդներն այցելում են Հռոմի սրբավայրերը, այնուհետև մեկնում են Աթենք: Ձմեռն այնտեղ անցկացնելուց հետո ճանապարհվում են Կոստանդնուպոլիս:

Աշխարհ տեսած և գիտության լույսով լցված հայրենակարոտ երիտասարդների խումբը, 5-6 տարվա բացակայությունից հետո, շուրջ 440 թվականին վերադառնում է Հայաստան: Սակայն այդ ժամանակ նրանց սիրելի ուսուցիչները՝ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, այլևս չկային...

Մտավոր հարուստ ավարով հայրենիք վերադարձած Մովսես Խորենացին լծվում է ստեղծագործական եռանդուն աշխատանքի. կատարում է կարևոր թարգմանություններ, գրում ինքնուրույն մեծարժեք երկեր: Սակայն այս լուսավոր գործիչը ևս ենթարկել է հալածանքի: Բարեբախտաբար, ունեցել է նաև

իրեն գնահատողներն ու աջակիցները: Այդպիսին էր ժամանակի կաթողիկոս Գյուտ Արահեզացին, որը Խորենացու ուսումնակիցն ու գաղափարակիցն էր և հովանավորելով նրան՝ ձեռնադրել էր Բագրևանդի և Արշարունիքի միացյալ թեմի առաջնորդ: Ճարտասանության ու երգեցողության մեջ խորացած Խորենացուն նա ներկայացրել է շարականներ ստեղծելու մի խոշոր ծրագիր: Խորենացին այն իրագործել է 460-ական թվականներին:

Մովսես Խորենացուն գնահատել է նաև ժամանակի ազդեցիկ աշխարհիկ տերերից մեկը՝ նշանավոր ռազմական գործիչ իշխան Սահակ Բագրատունին, որը Վահանանց պատերազմի հերոսներից էր: Նրա պատվերով է Խորենացին 470-ական թվականներին գրել իր «Հայոց պատմությունը»:

Կյանքի վերջին Մովսես Խորենացին ապրել է զրկանքների մեջ: Վախճանվել է 490-ական թվականների սկզբին: Նրա գերեզմանն ավանդաբար ցույց է տրվել Մշո Առաքելոց վանքի գավթում:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մովսես Խորենացու անունով մեզ հասել են մի շարք թարգմանական և ինքնուրույն երկեր՝ քերականական, փիլիսոփայական աշխատանքներ, ճառեր, թղթեր, ներբողյաններ:

Նրա վաղ շրջանի ստեղծագործությունն է համարվում «Պիտոյից գիրքը», որը ճարտասանական վարժությունների ժողովածու է: Ճանաչողական և գեղարվեստական արժեք ունի «Վարդավառի խորհրդի մասին» ներբողյանը, որտեղ հեղինակը ճարտասանական վարպետությամբ փառաբանել է Քրիստոսի հրաշագործությունները: Հիշատակելի է նաև «Սրբուհի Աստվածածնի և նրա պատկերի պատմությունը» երկը, որտեղ Խորենացին ներբողելով՝ ներկայացրել է Մարիամ Աստվածածնի կյանքի որոշ հետաքրքիր դրվագներ: Իսկ «Սուրբ Հռիփսիմյանների պատմությունը» երկում հաղորդել է Հայաստանում քրիստոնեության տարածման որոշ կարևոր մանրամասներ:

Մովսես Խորենացին հունարենից թարգմանել է մի շարք աստվածաբանական ճառեր: Սակայն նրա լավագույն թարգմանական աշխատանքը Ալեքսանդր Մակեդոնացու կյանքի պատմությունը ներկայացնող երկն է, որը պատմական-գեղարվեստական մեծ արժեք ունեցող հերոսապատում է:

Խորենացին համալրել է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի գրած հոգևոր շարականները՝ ստեղծելով բազմաթիվ նոր երգաշարեր՝ դառնալով Սահակ-Մեսրոպյան հանճարով հիմնված հայ անհատական բանաստեղծության

առաջատարը:

Իր արձակ ճարտասանական գործերի և շարականների համար Խորենացին արժանիորեն կոչվել է Քերթողահայր:

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Մովսես Խորենացու հարուստ գրական ժառանգության մեջ ամենաարժեքավորը «Հայոց պատմությունն» է, որը հայ պատմագրության գլուխգործոցն է, Ոսկեդարի մատենագրության թագն ու պսակը: Այս անզուգական պատմական երկի համար Քերթողահայրը արժանիորեն մեծարվել է նաև Պատմահայր պատվանունով:

Խորենացին մեծ խանդավառությամբ է ընդունել Հայոց պատմությունը գրելու՝ Սահակ Բագրատունու առաջարկը: Նա ինքն էլ մտադիր էր եղել ստեղծելու մի այդպիսի պատմական երկ, քանի որ ձեռքին ունեցել էր դեռևս ուսանողական տարիներից հավաքած բոլոր անհրաժեշտ նյութերը՝ մանրամասն ուսումնասիրած լինելով դրանք: Նա կատարել է մի անօրինակ սխրանք՝ առաջինը լինելով, գրել Հայոց ամբողջական պատմությունը՝ սկսելով նախապատմական ժամանակներից, մինչև 5-րդ դարի առաջին կեսը:

Խորենացու Պատմությունը բաղկացած է երեք մասից, որոնք հեղինակը կոչել է գրքեր: Առաջին գիրքը («Հայոց մեծերի ծննդաբանությունը») ընդգրկում է հայ ժողովրդի նախասկզբնական պատմությունը: Հեղինակն այստեղ հիմք է ընդունել հնագույն առասպելներն ու վիպերգերը:

Երկրորդ գիրքը («Միջին պատմություն մեր նախնիների») սկսվում է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից, Արշակունյաց թագավորության հաստատումից մինչև Տրդատ Մեծի գահակալությունը և Հայաստանում քրիստոնեության տարածումը: Այստեղ հեղինակը մանրամասն շարադրանքով ներկայացնում է քաղաքական խոշոր իրադարձությունները, հայ արքաների մղած պատերազմները Հռոմի, Պարսկաստանի և այլ երկրների դեմ, Հայաստանում պետական և հոգևոր կարգերի հաստատումը, քաղաքների ու բերդերի շինարարությունը և այլն: Այս գրքում ևս Խորենացին մեջբերում և վերաշարադրում է որոշ առասպելներ, ավանդավեպեր ու զրույցներ: Իսկ Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի ժամանակաշրջանը ներկայացնում է թե՛ օտար աղբյուրների, թե՛ Ագաթանգեղոսի Պատմության հիման վրա:

Վերջին՝ երրորդ գիրքը («Մեր հայրենիքի պատմության ավարտը») ընդգրկում է Տրդատ Մեծի ժառանգների գահակալության պատմությունը, մինչև

Արշակունյաց թագավորության ավարտը, հայ գրերի գյուտը և Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի վախճանը:

Պատմությունն ավարտվում է «Ողբ» անունով հայտնի եզրափակիչ գլխով:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Ճիշտ է ասված, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» մեր ժողովրդի ծննդյան վկայականն է: Նա առաջինը փորձեց ցույց տալ, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ինչ ճանապարհ ենք անցել: Այսինքն՝ վերականգնել է հայ ժողովրդի պատմական հիշողությունը: Պատմահայրը հաստատագրել է հայության տեղը աշխարհի հնագույն ժողովուրդների մեջ:

Մովսես Խորենացու Մատյանը Հայոց նախնական պատմության ամենահավաստի աղբյուրն է՝ հմտորեն հյուսված բազմաթիվ գրավոր ու բանավոր վկայությունների հիման վրա: Պատմահայրը ձգտել է գրել քննական պատմություն: Առավել համակարգված ձևով ընտրել, ստուգել և ճշգրտել է իրեն հայտնի բոլոր փաստերը, և եթե իր նախորդները գրել են միայն իրենց ժամանակաշրջանի պատմությունը, ապա նա գրել է երկար ու ձիգ դարեր ընդգրկող ընդհանրական պատմություն:

Խորենացին գիտնական պատմիչ է: Նա և՛ պատմագիր է, և՛ պատմագետ: Նրա համար ամենակարևորը պատմական ճշմարտությունը հայտնաբերելն է: Նա իր խոսքն ընդհատել է բոլոր այն դեպքերում, երբ ձեռքին եղած տվյալները կասկածելի են եղել. դրանք նա ավելորդ է համարել իր ճշմարտապատում Մատյանում ներմուծելու համար:

Պատմահայրն օգտագործել է բազմաթիվ բանահյուսական և քառասունից ավելի գրավոր աղբյուրներ՝ մեծ մասամբ օտար հեղինակների: Երբեմն իրար հակասող այդ բազմազան աղբյուրների մեջ էլ նա իր հանճարի ուժով, հմուտ պատմագետի խորամտությամբ կարողացել է ճիշտ կողմնորոշվել, տարբերել հավանականն անհավանականից, ճշմարիտը կեղծիքից:

Խորենացին հին բանահյուսական ստեղծագործությունները ևս օգտագործել է որպես աղբյուր՝ գտնելով դրանց պատմական հիմքը, զատորոշելով առասպելն իրականից, երբեմն համեմատելով հայ և օտար դիցաբանություններն ու առասպելական հերոսներին: Կարողանալով հին աղբյուրներից վերականգնել պատմական ճշմարտությունը, նա ցույց է տվել մեր ժողովրդի հնագույն ծագումը և հերոսական անցյալը:

«Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»,- ասել է Պատ-

մահայրը: Ուստիև իր հավաքած հարուստ նյութը նա համակարգել է ու ներկայացրել ժամանակագրական ընթացքի մեջ: Կազմել է հայ նահապետների և թագավորների գահակալության ժամանակագրական ցանկեր՝ համեմատելով ու ճշտելով դրանք մյուս երկրների տիրակալների ցանկերի հետ: Դրանով նա ուսուցանել է նաև, որ ժողովրդի պատմությունը պետք է դիտել ու գնահատել համընդհանուր պատմության մեջ, որպես դրա մի մասը:

Այս ամենի շնորհիվ Մովսես Խորենացին ստեղծել է համապարփակ և ստուգապատում մի պատմական երկ: Դա մի մեծարժեք հուշարձան է, մի հանրագիտարան, որում արտացոլված են հին Հայաստանում ծավալված կարևոր քաղաքական անցուդարձերը, երկրի աշխարհիկ ու հոգևոր կյանքը:

Խորենացու երկը նաև շատ կարևոր աղբյուր է Հայաստանի հարևան և ոչ հարևան բազմաթիվ ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Ուստի այն համաշխարհային արժեք ունեցող պատմական սկզբնաղբյուր է, իսկ նրա հեղինակը ոչ միայն հայ, այլև վաղ միջնադարի ընդհանուր քրիստոնեական պատմագրության ամենախոշոր դեմքն է:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Խորենացու երկն ունի նաև խոր գաղափարական բովանդակություն: Պատմության սկզբում դիմելով Սահակ Բագրատունուն՝ հեղինակը նշում է, որ նա, ինչպես և մենք բոլորս, «մի նախնական և քաջ ազգի» ծնունդ ենք, որն աչքի է ընկել «բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով»: Իր փայփայած այս ամենակարևոր գաղափարը Պատմահայրը ձևակերպել է որպես թևավոր խոսք, որը պետք է կարդալ ու սովորել նրա ոսկեղենիկ լեզվով. «Թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի» (Թեև փոքր ազգ ենք, և շատ փոքրաթիվ սահմանված, և թույլ կարողությամբ, և մեր թագավորությունը՝ բազմիցս նվաճված, սակայն մեր աշխարհում ևս գործվել են բազում սխրանքներ, որոնք արժանի են գրավոր հիշատակության:)

Այստեղ ամփոփված է նաև Խորենացու մյուս կարևոր գաղափարը՝ որպես սերունդներին ուղղված պատգամ՝ ճանաչել սեփական արժանիքները՝ զերծ մնալով ազգային սնապարծությունից:

Չկա ոչ մի անթերի և բացառիկ ազգ, և մեր պատմիչը, որքան էլ ազգասեր, բայց շատ իրատես է: Նա նկատել և խստորեն քննադատել է նաև իր ժողովրդի

թերությունները, հատկապես պետական մտածողության պակասը: Նրա քննադատական խոսքերը նպատակ են ունեցել սթափեցնել ու բարեկրթել ժողովրդին՝ որպես պետական առաքինի ազգի:

Մովսես Խորենացին ոչ միայն ցույց է տվել, թե որտեղից ենք գալիս և ինչպիսի ճանապարհ ենք անցել, այլև՝ թե ո՞վ ենք մենք, որն է մեր ազգային դիմագիծն ու տեսակը: Այսինքն՝ նա մեր ժողովրդին պարգևել է ինքնաճանաչողություն և այդպիսով նաև՝ ազգային արժանապատվություն:

Պատմիչը ձգտել է ժամանակակիցներին վարակել մեծագույն զգացումով՝ հայրենասիրությամբ, և ազատագրական սխրանքի մղել նրանց՝ քաջ նախնիների օրինակով: Նրա համար ամենակարևորը ազգային միասնությունն ու պետականությունն է: Ահա թե ինչու նա, քրիստոնյա լինելով հանդերձ, փափագել է ապրած լինել թեկուզ հեթանոս, բայց հզոր և բնիկ հայկական թագավորության ժամանակ, քան օտարների գերիշխանության ներքո:

Խորենացին ինչպես որ ընդարձակել է Հայոց պատմության սահմանները, այնպես էլ ընդարձակել է ազգի և ազգային հերոսի գաղափարը: Մինչև Պատմահոր ասպարեզ իջնելը, հայ ազգը մեր մատենագրության և գիտակցության մեջ անբաժանելիորեն կապված է եղել քրիստոնեական հավատի հետ: Մինչդեռ Խորենացին շատ ավելի լայն հայացքով է դիտել ազգին, նրա պատմությունն ու հերոսներին: Պատմահոր ընկալմամբ՝ հայ ազգը անհիշելի ժամանակներից Հայոց լեռնաշխարհում ապրած և ապրող, նույն արյունը կրող և նույն լեզվով խոսող ժողովուրդն է՝ լինի հեթանոս թե քրիստոնյա:

Այս լայն հայացքով է, ահա, պատմագիրը ներկայացրել իր հերոսներին, որոնք արդեն ոչ թե քրիստոնյա ասպետներ են, այլ զուտ ազգային դյուցազուններ: Նրանց գնահատման չափանիշը նրանց կատարած գործերն են: Խորենացու համոզմամբ՝ «Ինչը մարդն ու նրա գործերն են, այն էլ նրա պատմությունն է»:

Մովսես Խորենացու հիմնական նպատակն է եղել տեսնել Հայոց «բնիկ տերերի» թագավորությունը՝ հայկական պետականությունը վերականգնված, տեսնել իր հայրենիքը միասնական, հզոր ու լուսավոր:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Խորենացին ևս իր երկը հետաքրքիր ու գրավիչ դարձնելու համար ձգտել է գրել գեղեցիկ լեզվով ու ոճով: Նա այն շարադրել է որպես կենդանի զրույց իր պատվիրատու Սահակ Բագրատունու կամ այլ կերպ ասած՝ իր ընթերցողի հետ:

Իր երկը Պատմահայրը շարադրել է աշխույժ և համաչափ, հավաստի և

կոկիկ պատմելաձևով: Նրա կարծիքով՝ պատմությունը չպետք է երկարաշունչ լինի, որպեսզի ընթերցողին ձանձրույթ չպատճառի: Ուստի որոշ դեպքերում նա ընդհատում է իր խոսքը՝ խոստանալով տվյալ նյութին մեկ ուրիշ երկում անդրադառնալ: Իսկ եթե նյութը պատմության համար շատ կարևոր է, և հավաստի փաստեր էլ կան, նա չի խուսափել երկար խոսքից՝ դարձյալ մնալով անհրաժեշտ չափի մեջ: Ըստ նրա՝ պատմական երկը պետք է կարդալ ոչ թե «պերճաբանությունից գրավվելով», այլ «պատմածների ճշմարտությանը կարոտելով»:

Քանի որ, Խորենացու համոզմամբ, հայրենասիրությունը բխում է ամենից առաջ հայրենի բնության և երկրի նկատմամբ սիրուց, ուստի նա Պատմության մեջ մեծ տեղ է հատկացրել հայրենի բնության տեսարանների և հայոց քաղաքների ու բերդերի նկարագրություններին: Դրանց մեջ գործածված են գեղեցիկ մակդիրներ, համեմատություններ ու փոխաբերություններ:

Խորենացին ևս իր երկում գործածել է իմաստալից ասույթներ, որոնք նույնպես դարձել են մինչև այժմ գործածվող թևավոր խոսքեր, ինչպես. «Քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կտրում է, այնքան էլ գրավում է», կամ՝ «Քաջերի սերունդները քաջեր են»:

Պատմահայրն այս կամ այն դեպքի նկարագրության առիթով արտահայտել է նաև իր անձնական զգացումները՝ ուրախությունը, տխրությունը, հպարտությունը, ոգևորությունը, վիշտն ու իղձերը: Դրանք ավելի շատ բացահայտում են մեծ ազգասերի հոգին՝ նրա երկը դարձնելով առավել զգացմունքային և հուզիչ:

Խորենացին պատկերել է հայրենիքի համար անձնազոհաբար մարտնչած ինչպես հեթանոս, այնպես էլ քրիստոնյա քաջերի՝ առանց կրոնական խտրականության: Պարսավել է այն թագավորներին, որոնք տրվել են զեխ ու շվայտ կյանքին և հեռու են եղել քաջությունից, ուսումից ու բարի վարքից: Պատմիչի չափանիշը մշտապես եղել է ծառայությունը հայրենի երկրին ու նրա պետականությանը:

Պատմահայրը կերտել է նաև մի շարք հոգևորականների պատմական-գեղարվեստական կերպարներ: Այս անգամ նա հիմնական չափանիշ է ունեցել հոգևորականության կրթական-լուսավորական ազգանվեր գործունեությունը: Այս առումով բարձրագույն օրինակներ են Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի լուսավոր կերպարները:

Իր կերտած կերպարներով, ինչպես նաև բնության, քաղաքների ու մարտերի նկարագրություններով, իմաստալից ասույթներով ու հուզառատ խոսքով, քաջության, ուսման ու առաքինության փառաբանությամբ Խորենացին նպատակ

է ունեցել պաշտպանել միասնական հայրենիքի, հզոր ու լուսավոր ազգային պետության գաղափարը: Դա ոչ միայն նրա ժամանակի, այլև հետագա դարերի ու նաև այսօրվա հրամայականն է:

ՀԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՔԸ

Խորենացու Պատմությանը գեղարվեստական մեծ արժեք, շուք ու փայլ են տալիս հայ հին բանահյուսական ստեղծագործությունների՝ առասպելների ու վիպերգերի գրառումներն ու վերաշարադրանքները:

Խորենացին է հաղորդել մեզ ամպրոպի, պատերազմի և քաջության աստված վիշապաքաղ Վահագնի, կիսաստված Տորք Անգեղի մասին առասպելները, «Հայկ և Բել», «Արամ», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Արտավազդ» վիպերգերը:

Պատմահայրը գողթան երգիչ-գուսաններից գրի է առել վիշապաքաղ Վահագնի ծնունդը պատկերող մեզ հայտնի հնագույն երգը.

Երկնէր երկին, երկնէր երկիր,
երկնէր եւ ծովն ծիրանի.
երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեգնիկ:

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
ընդ եղեգան փող բոց ելանէր,
եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ունէր,
բոց ունէր մորուս,
եւ աչկունքն էին արեգակունք:

(Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը, երկնում էր և ծովը ծիրանի, ծովի մեջ երկունք ուներ նաև կարմիր եղեգնիկը: Եղեգի փողից ծուխ էր ելնում, եղեգի փողից բոց էր ելնում, և բոցի միջից վազում էր մի խարտյաշ պատանյակ: Նա հուր մազեր ուներ, բոց մորուք ուներ, և աչուկներն էին արեգակներ):

Խորենացին գուսաններից լսել է նաև այլ երգեր Վահագնի քաջագործությունների մասին և վկայել, որ դրանք շատ նման են Հերակլեսի սխրանքներին:

Պատմահայրը վերաշարադրել է մեզ հայտնի հնագույն վիպերգը՝ «Հայկ և

Բել»-ը: Սա վիպական արձագանքն է այն հնագույն ժամանակաշրջանի, երբ Հայկական լեռնաշխարհում համախմբվել են հայկական ցեղերը և հաղթական կռիվներով ձեռք բերել իրենց անկախությունն ու ազատությունը:

Հայ ժողովրդի անվանադիր նախնի Հայկին Խորենացին պատկերել է թե՛ արտաքին գեղեցկությամբ, թե՛ իմաստությամբ և հերոսական առաքինություններով: Հայկը թիկնեղ է, գեղագանգուր, հաստաբազուկ, զվարթաչյա (վառվռուն աչքերով), նաև ուշիմ է ու խոհեմ, հմուտ ռազմագետ է և ազատատենչ առաջնորդ: Նա անհանդուրժող է բռնության հանդեպ, ուստի դյուցազնաբար մարտնչում է բռնալալ Բելի դեմ և հաղթում նրան:

Անձնուրաց հայրենապաշտպաններ են նաև Հայկ Նահապետի ժառանգներ Արամը և Արա Գեղեցիկը: Վերջինիս վայելչագեղ արտաքինին զուգակցված է պարկեշտությունը, անձնուրաց նվիրվածությունը ընտանիքին ու հայրենիքին:

Խորենացու շարադրած «Տիգրան և Աժդահակ» վիպերգի հերոս Տիգրանը Պատմահոր նախընտրած հայ գահակալի կերպարն է: «Նա ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ... Նա խաղաղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուղ ու մեղրով»:

Գողթան երգիչներից Խորենացու գրի առած «Արտաշես և Արտավազդ» վիպերգը տարբեր զրույցների մի ամբողջություն է: Այստեղ ավելի շատ պատկերված է Հայաստանի ներքին կյանքը, արտացոլված են որոշ հին բարքեր ու սովորություններ: Պատմիչը հատկապես ընդգծել է վիպերգի հիմնական գաղափարը, այն է՝ հայրենիքը բարգավաճում է միայն բարի, արդար, խիզախ և ժողովրդին նվիրված օրինական թագավորի օրոք:

«ՈՂԲ»-Ը

Խորենացու Պատմության վերջընթեր հատվածը հեղինակը գրել է իբրև ողբ: Դրա բուն պատճառը Հայոց անկախ պետականության վերացումն էր՝ իր բոլոր ծանր հետևանքներով հանդերձ:

Ողբի առաջին իսկ տողը հայ ազգի մի սեղմ ու փայլուն գովերգ է, որ նույնպես վերածվել է թևավոր խոսքի.

«Ողբում եմ քեզ, Հայո՛ց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագո՛ւյնդ»:

Եվ անմիջապես նշվում է ողբալու պատճառը. «Վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմա-

տացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, տգիտությամբ հաստատվեց չարափառությունը»:

Ազգային պետականության կործանումը ծնում է անսահման չարիքներ: Իշխում են օտար տերերը, վրդովվում է երկիրը, հարկահաններն ու ավազակները թալանում ու հափշտակում են երկրի բարիքները, երևելի մարդիկ բանտարկվում կամ աքսորվում են, կեղեքվում են շինականները, քանդվում են քաղաքներն ու ամրոցները, տարածվում են համաճարակներ ու սով:

Խախտվում է նաև երկրի ողջ բարոյական կյանքը, արմատավորվում են անկարգությունները, հիմնավորվում է տգիտությունը: Այլասերվում են ժողովրդի բոլոր խավերը: Երևան են գալիս փողով ընտրված և ոսկեսեր ուսուցիչներ, կեղծավոր և սնափառ կրոնավորներ, հպարտ ու դատարկախոս պաշտոնյաներ, ծույլ և ինքնահավան աշակերտներ, պարծենկոտ ու վախկոտ զինվորականներ, ապստամբ ու ագահ իշխաններ, կաշառակեր ու ստախոս դատավորներ: Փոխվում է անգամ մայր բնությունը...

Պատմագիրն առավել արտասվագին է ողբում իր սիրելի ուսուցիչների մահը: Այդ ողբը նաև դառնաշունչ ներբող է՝ ուղղված հայ ազգի լուսավորիչներին:

Խորենացին հայրենի երկրի վերջին՝ մանուկ թագավորի և Հայոց հոգևոր առաջնորդների ողբին ճարտարորեն միահյուսել է իր անձնական ողբը՝ իր լալագին խոսքն ուղղելով մերթ մեկին, մերթ մյուսին, մերթ ինքն իրեն:

Խորենացին իր Ողբի մեջ խտացրել է հայրենիքի հետ կապված իր բոլոր հույզերն ու ապրումները, հայրենասերի անսահման ցավն ու մորմոքը: Պատմության այդ դրվագը հեղինակի թե՛ հայրենասիրության և թե՛ ստեղծագործ մտքի փայլուն արտահայտություններից է: Այն սկզնավորել է հայ միջնադարյան ողբագրությունը, ապա հասել մինչև Խաչատուր Աբովյան և մեր օրերը...

Առհասարակ, Մովսես Խորենացու ստուգապատում և գեղեցկաոճ «Հայոց պատմությունը», որ բացահայտում է հայ ժողովրդի հնագույն պատմությունը և տոգորված է ջերմ հայրենասիրությամբ, ազգային ու պետական բարձր գաղափարներով, տիպար-օրինակ է եղել հետագա գրեթե բոլոր հայ պատմիչների համար: Այն, ընդհանրապես, խոր ազդեցություն է ունեցել ողջ հայ գրականության վրա, մեծապես նպաստել հայ ազգային մտածողության և բարոյականության զարգացմանը, դարձել ազգային ինքնաճանաչման, հայրենասիրական դաստիարակության անկրկնելի ուսուցարան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՍԿԵԴԱՐԻՑ ՀԵՏՈ

Ոսկեդարի գրական բուռն վերելքից հետո 6-րդ դարը հանդիսացավ գրական-մշակութային կյանքի հարաբերական դադարի և նոր կուտակումների ու լիցքավորման շրջան:

Պարսկաստանի և Բյուզանդիայի գերիշխանության տակ գտնվող Հայաստանը 7-րդ դարում ենթարկվեց մի նոր հզոր պետության՝ Արաբական խալիֆաթի ծանր հարվածներին և երկարատև լծին: Հայ ժողովուրդը ծավալեց հերոսական ազատագրական պայքար, որը տևեց երկու հարյուրամյակից ավելի և պսակվեց հայկական նորանկախ պետության՝ Բագրատունյաց թագավորության հռչակումով (885 թ.):

Այս ժամանակաշրջանում որոշակի առաջընթաց ունեցավ գիտական և աստվածաբանական-փիլիսոփայական միտքը: Գրվեցին ճարտասանական արժեքավոր երկեր: Պատմագրության ասպարեզում հանդես եկան մի շարք խոշոր դեմքեր: «Պարսից պատերազմ» վիպերգի անմիջական ազդեցությամբ ստեղծվեց միջնադարյան երկրորդ խոշոր ժողովրդական ավանդավեպը՝ «Տարոնի պատերազմը»: Մի փոքր ավելի ուշ վերջնականապես կազմավորվեց հայ ժողովրդական վիպերգության գլուխգործոցը՝ «Սասնա ծռեր» էպոսը, որի ակունքները բխում են անհիշելի ժամանակներից...

7-8-րդ դարերում վերստին ծաղկեց հոգևոր երգը. ասպարեզ իջան նշանավոր շարականագիրներ: Առաջինը կաթողիկոս Կոմիտաս Աղցեցին է: Նա է կառուցել Հռիփսիմեի հոյակերտ տաճարը և այդ առիթով ստեղծել Հռիփսիմյան կույսերին նվիրված օրհներգերի կարգ: Այն սկսվում է «Անձինք նուիրեալք» շարականով, որն աննախադեպ ստեղծագործություն էր հայ քերթության մեջ:

Կոմիտաս Աղցեցուց հետո ժամանակի քերթության երկրորդ խոշոր դեմքը ճարտասան-բանաստեղծ Դավթակ Քերթողն է: Նա գործել է Աղվանքի իշխանապետ Ջվանշիրի արքունիքում և վերջինիս նահատակության առթիվ հյուսել է մի մեծարժեք ողբ՝ գրված շարականի ժանրով:

7-8-րդ դարերում օրհներգության ասպարեզում հանդես եկան նաև Սահակ Ձորոփորեցին, Անանիա Շիրակացին, Հովհան Օձնեցին և ուրիշներ: Նրանց մեջ է հայ առաջին երաժիշտ-բանաստեղծուհին՝ Սահակդուխտը:

9-րդ դարում հայ գրականությունն ապրեց մի տևական անկում, որին, սակայն, պիտի հաջորդեր մի աննախընթաց վերելք: Դա պայմանավորված էր Հայաստանի տնտեսական ու կրթական-մշակութային կյանքի զարգացմամբ: Այս ժամանակամիջոցում են ստեղծվել մի շարք մեծարժեք պատմագրական,

ինչպես նաև գիտական-ճարտասանական երկեր:

Գրականության վերելքի ամենավառ արտահայտությունը դարի հանճարի՝ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունն է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ կառուցվածք ունի Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:
2. Նախորդ Պատմությունների հետ համեմատած ինչ առանձնահատկություններ ունի Խորենացու Պատմությունը: Թվարկեք և մեկնաբանեք:
3. Ինչպիսի՞ գեղարվեստական արժեքներով է օժտված Պատմահոր երկը:
4. Երկում ինչպե՞ս են բնութագրված ազգային հերոսները:
5. Ինչ է բովանդակում «Ողբ» հատվածը:
6. Կազմեք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:
7. Երկի համապատասխան հատվածը կարդալուց հետո ներկայացրեք՝ Պատմությունը անձնական շարժառիթո՞վ է գրվել, թե՞ ոչ: Զուգորդեք աշխատության բովանդակության հետ:
8. Սահիկաշարով ներկայացրեք աշխատության կառուցվածքը՝ գրելով յուրաքանչյուր հատվածի մեջ հեղինակի արծարծած խնդիրները:
9. Մեկնաբանեք՝ ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարները՝ բերելով օրինակներ:
10. Արժևորեք հեղինակի ունեցած դերը ազգային-մշակութային արժեքների պահպանման գործում՝ օրինակներով հիմնավորելով մեկնաբանությունը:
11. Վերլուծեք առասպելներում առկա խնդիրները և հեղինակի առաջարկած լուծումները՝ բերելով օրինակներ:
12. Վենի գծակարգով ներկայացրեք առասպելի ձեր սիրելի հերոսի համեմատական բնութագիրը, նրա վարքագիծը:
13. Առասպելներում ներկայացված իրադարձությունները համեմատեք մեր դարաշրջանի հետ՝ բերելով օրինակներ:
14. «Ողբ»-ից գտեք այն տողերը, որտեղ հեղինակը պատմում է համազգային վշտի մասին, ցույց է տալիս մարդու հոգու խռովքի գերազանցությունը բնության տարերքի խռովքի համեմատությամբ:
15. Ստեղծագործաբար վերաշարադրեք «Ողբ»-ի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները:
16. Ուսումնասիրեք և ներկայացրեք գրողի կենսագրության և «Ողբ»-ի միջև եղած առկա կապերը:
17. «Ողբ»-ից դուրս գրեք բոլոր այն մերժելի, կործանարար գծերը, որոնք թվարկում է Խորենացին:
18. «Ողբ»-ից դուրս գրեք այն տողերը, որոնք խիստ արդիական են:
19. Գրեք շարադրություն՝ «Ինչպիսին կուզենար տեսնել իր ազգը Խորենացին» վերնագրով:
20. Ապացուցեք «Ողբ»-ի արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր: